Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

01.02.2022թ. ք. Աբովյան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի Աբովյանի բաժանմունքի հարկադիր կատարող՝ Հարություն Սարգսյանս ուսումնասիրելով 01.02.2022թ. վերսկսված թիվ 06702852 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 09.10.2020թ. տրված թիվ ԿԴ1/5326/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Մելանյա Մխիթարի Օխոյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 177,251.30 ՀՀ դրամ՝ որպես վարկի ընդհանուր պարտքի և 3,545 ՀՀ դրամ՝ նախապես մուծված պետական տուրքի գումարը:
Վարկի ոչ ժամկետանց մնացորդի նկատմամբ պայմանագրի 1.1 կետով նախատեսված 9 տոկոս տոկոսադրույքի հաշվարկը շարունակել 19.11.2019թ.-ից մինչև դրա փաստացի մարումը, բայց ոչ ավել քան 07.12.2020թ.:
Ժամկետանց վարկի մնացորդի և հաշվարկված տոկոսների նկատմամբ տույժի հաշվարկը 19.11.2019թ. մինչև դրա փաստացի մարումը շարունակել օրական 0.09 տոկոսով՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ հիմք ընդունելով 10.12.2018թ. կնքված վարկային պայմանագրի 6.1 կետով նախատեսված տոկոսադրույքը:
Պարտապանից նաև բռնագանձված ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28,28.1, 67 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3, 35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Մելանյա Մխիթարի Օխոյանի անձ. 00 4327391 / «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված / պատկանող ոսկյա զարդերը

հ/հ	գույքի անվանումը և նկարագիրը	քանակը	միավորի գնահատման գինը	միավորի մեկնարկային գինը
1.	Շղթաի Հարգը՝560, քաշը՝ 13 գրամ	1հատ	208,000 դրամ	156,000 դրամ

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի ՝ harkadir.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝

22— 03— 2022թ

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները: Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ Ա Ց Ո Ւ Մ Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անրավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով:

Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը:

Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Հարկադիր կատարող Հ.Սարգսյան

Ազգանուն

ստորագրություն